


9110



1929

С. 1930/92

ՄԵԶՈՆԱՑԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ

ՍՊԱՌԱԳՈՒՆ ՄԱԿԻՆ

ՕԲԸԼՈՒԺԻՎԱՆԻԵ
СЕЗОННЫХ РАБОЧИХ

(12)

1. Վ. Ա. Մ. ԽՈՐՀՅՈՒ ՊՐԵԶԻԴԻՈՆԻՄԻ
ՁՐՁԵՎԵՐԸԿԵՐԵ:
 2. Վ. Ա. ՊՐՈՖԻՆՈՐՀՅՈՒ 4-ԻԻ ՊԼԵՆՈՒՄԻ
ՎԱՐՈՂՈՒՄՆԵՐԵ:
 3. Հ. Ա. Մ. Կ. ԽՈՐՀՅՈՒ ՀՐԱՀԱԳԳՈՎԿԵՆ
№ 10 ԵԱՄԵԿՐ:
1. ЦИРКУЛЯР ПРЕЗИДИУМА
С. П. С. Г.
 2. ПОСТАН. 4-го ПЛЕНУМА
СОВПРОФА.
 3. ДИРЕКТИВНОЕ ПИСЬМО
№ 10 В. Ц. С. П. С.

331.88
U-33

ՓՅՈՒՆՈՒ—1929

42001

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒՏԻ
ԽՈՏՈԽՈՎԵԴԵԿԻ
Ակադեմիա
СССР

Թողոր պրոֆխորհուրդներին, զավարովբյուրոներին եւ
սեզոնային բանվորների ընդգրկող արհմիուրյուն-
երին

Թանգագին ընկերներ՝

Սեզոնային բանվորների ուժով կառուցվող աշ-
խատանքների վրա պետությունը տարեցտարի ծախ-
սում և հակայական գումարներ։ Սեզոնային բանվոր-
ները հանդիսանում են այն հիմնական խողովակներից
մեկը, վորի միջոցով բանվոր դասակարգի ադդեցու-
թյունը տարածվում և գյուղացիական չքավոր և միջակ
տարրերի վրա և կապ և ստեղծվում նրանց մեջ։

Այդ պատճառով ել բացառիկ նշանակություն և
ստանում այն խնդիրը, թե ինչքան լավ ու կայուն
հողի վրա յե զրված սեզոնային բանվորների կազմա-
մակերպչական ու քաղաքական սպասարկման գործը։
Այս խնդիրին առանձին ուշադրություն նվիրեցին՝
ինչպես Համամիութենական Արհմիությունների կենտ-
րոսական Խորհուրդը, վերջերս բաց թողած իր, գի-
րեկարիվային № 10 նամակով այնպես և Վրաստանի
պրոֆխորհուրդը, վորը մանրամասն քննության յեն-
թարկեց այս խնդիրը եր վերջին պլենումի նիստե-
րին։

Վրաստանի պրոֆխորհուրդը առաջարկ և ձեզ
այս դիրեկտիվները շտապ կարգով մշակել պրոֆակ-

տիվի և սեղոնային բանվորների լայն մասսաների
շրջանում և ձեռք առնել սեալ միջոցներ կյանքում
այն կիրառելու համար:

Վ. Ա. Մ. Խ. քարտուղար՝ Մատկեվիչ

Վ. Ա. Մ. Խ. կազմբաժնի վարչի
տեղակալ՝ Մարկման



36036-66

Վրաստաճի Պրոֆխորհրդի (1929 թ. ապրիլի 16—17-ի)
4-րդ պլենումի գործում ները

«Սեղոնային բանվորներին սպասարկելու մասին»

Արձանագրելով այն հանգամանքը, վոր սեղոնային բանվորներին սպասարկելու խնդրին արհմիությունները, տնտեսական որգանները, կոոպերացիան աշխատանքի, լուսավորության և առողջապահության որգանները ցույց են տվել մինչև որս աչքի ընկնելու չափ թույլ ու անբավարար վերաբերմունք, վորի հետևանքում՝ ա) սեղոնային բանվորների աշխատանքի և կենցաղի պայմանները յեղել են չափազանց ծանր վիճակում. բ) սեղոնային բանվորների աշխատանքի կանոնավորման խնդիրը յեղել է անարխիկ գրության մեջ, մի գրություն, վորը, մի կողմից, առաջ և բերել աշխատանքի յերբեմնակի դադար, մյուս կողմից կառուցողական աշխատանքի զգալի թանգություն. գ) աշխատանքի արտադրականությունն ու նրանց մեջ գոյություն ունեցող աշխատանքային գիսցիպլինան գտնվել ե միանգամայն անբավարար վիճակում. դ) սեղոնային բանվորների պրոետարացումը անց և կացվել չափազանց թույլ թափով. յե) նրանք շատ թույլ կերպով են ոգտագործված յեղել բանվոր դասակարգի ազգեցությունը գյուղում ուժեղացնելու համար:

Այս բոլորից բղխող դրությունը համարելով
միանգամայն աննորմալ և սեղոնային բանվորների
շրջանում տարգելիք աշխատանքը համարելով արհ-
միությունների աշխատանքի ամենակարևոր բնագա-
վառներից մեկը, պլենումը վորոշում ե՝

1) Առաջադրել բոլոր միջմիութենական կազմա-
կերպություններին և այն արհմիություններին, վո-
րոնք իրենց կազմի մեջ ընդգրկում են սեղոնային
բանվորների (կառուցողներ, հող—անտառ, սննդի և
համի, տեքստիլ աշխատավորների, լեռնարդյունաբե-
րական և այլն) մանրամասն կերպով մշակել Հ. Մ.
Կ. խորհրդի № 10 դիրեկտիվային նամակն ու ձեռք
առնել բոլոր անհրաժեշտ միջոցները կյանքում կիրա-
ռելու այն բոլոր գործնական ցուցումները, վորոնք
առաջադրված են այդ նամակում:

Առաջադրել Վրաստանի պլոֆինորհրդին հրատա-
րակել այդ նամակը տեղական լեզուներով և պար-
տադրել բոլոր արհմիություններին այդ հրատարակու-
թյունը մատակարարել սեղոնային բանվորների սպա-
սարկող բոլոր արհեստական կազմակերպություն-
ներին:

2. Պարտավորեցնել Ցեկավշիրուն և տեղական
կոոպերատիվային կազմակերպություններին շահա-
գրգուված արհմիությունների հետ մեկտեղ, շտապ կար-
գով ծրագիր մշակել սեղոնային բանվորներին, նրանց
աշխատավայրերում սպասարկելու համար կոոպերա-
տիվ խանութներ, կրավակներ և ճաշարաններ կազմա-
կերպելու համար: Առաջարկել առնարի ժողովածափ
վրաստանի լիազորին որ առաջ մտածել այդ խանութ-
ները, անհրաժեշտ քանակությամբ, թե արդյունաբե-

րական և թե դեֆիցիտային ապրանքով ապահովելու
մասին:

3. Համապատասխան արհմիությունները, աշ-
խատանքի որդանների հետ միատեղ շտապ կարգով
պիտի տեղի ու տեղն ուսումնամայրեն այն խնդիրները
թե վորքան ապահովված են սեղոնային բանվորները
բնակավայրերով և պիտի ձեռք առնեն բոլոր անհրա-
ժեշտ միջոցները գործություն ունեցող հանրակացա-
րանները կարգի բերելու և, յեթե այդ անհրաժեշտ ե,
նորերը կառուցելու ուղղությամբ:

4. Վ. Ա. Մորհրդի պրեզիդիումը պարտավոր
և հարց բարձրացնել Առժողկոմատի առջև—կազմա-
կերպելու մասներ այնտեղ, ուր հավաքվում են կա-
նացի սեղոնային բանվորական ույժեր:

5. Ապահովագրական որգանները պետք ե ընդ-
լայնեն ապահովագրական կետերի ցանցը սեղոնային
աշխատանքի վայրերում և պիտի ամեն միջոց գործ
գնեն, վորտեսզի Առժողկոմատը տպահովի այդ վայ-
րերը բժշկական կազմով և անհրաժեշտ գեղորաշքով:

6. Արհմիություններն ու համապատասխան տըն-
տեսական որգանները պիտի յեռանդուն աշխատանք
տանեն աշխատանքային դիսցիպլինան և աշխատան-
քի արտադրականությունը բարձրացնելու ուղղու-
թյամբ, գտնելով դրա համար համապատասխան ու
շոշափելի ցուցանիշներ:

7. Սեղոնային բանվորների աշխատանքի շուկան
կանոնավորելու նպատակով աշխատանքի բորսաները
պիտի շտապ կարգով պարզեն սեղոնային բանվորա-
կան ույժի պահանջվող քանակը և միջոցներ ձեռք

առնեն այդ ույժը ճիշտ ու նպատակահարմար կերպով
բաժանելու համար:

Սեղոնային բանվորների մեծ թվով կուտակվելու
վայրերում աշխատանքի բորսաները պիտի կազմա-
կերպեն տեղեկատու սեղաններ: Սրան գուղընթաց հա-
մապատասխան արհմիություններն եւ իրենց հերթին,
իրենց մոտ պիտի կանոնավորեն տեղեկություններ
տալու գործը:

Այդ նպատակով յուրաքանչյուր արհմիություն,
իր կողմից ջոկում և մի անհատի, վորի վրա հատուկ
պարագ և դնում տեղեկություններ ու խորհուրդներ
տալ սեղոնային բանվորներին:

8. Նկատի առնելով կառուցող բանվորների աշ-
խատանքի պաշտպանության և նրանց սպասարկման
առանձնահատուկ պայմանները, պարտավորեցնել Աշխ-
ժողկոմատին կառուցողական աշխատանքի սեղոնի ըն-
թացքում, պահել հատուկ աշխատանքի տեսուչ, հատ-
կապես սեղոնային բանվորներին սպասարկելու հա-
մար:

Միաժամանակ պարտավորեցնել Աշխժողկոմա-
տին—ցուցումներ աալ իր գավառական աշխատանքա-
յին տեսուչներին, վորպեսզի վերջիններս առանձին
ուշադրություն դարձնեն սեղոնային բանվորների աշ-
խատանքի պաշտպանության:

9. Աչքի առաջ ունենալով այն հանդամանքը,
վոր սեղոնային աշխատանքները ծավալվում են վոչ
միանգամից այլ աստիճանաբար, ապա բանվորական
կոմիտեների (կառուցկոմ և այլն) կազմակերպումը
հենց առաջին ամսից համարել աննպատակահարմար,
բավարպել միայն պրոֆլիագորներ ունենալով,

Բնտրված բանկոմը (բանվորական կոմիտեն)
վերընտրվում է ժամանակից առաջ այն դեպքերում,
յեթե ընտրողների կազմը փոփոխության և յենթար-
կվել կամ քանակով աճել է 50 կամ ավելի տոկոսով:
Արհմիությունների կենտրոնական վարչություն-
ներն ու նրանց գավրաժինները պիտի շուտափույթ
կերպով մշակին սեղոնային բանվորներին սպասար-
կող միութենական ցանցի կազմակերպման կարգն ու
ծրագիրը:

10. Առանձին ուշադրություն նվիրել սեղոնային
բանվորների մեջ տարպելիք կուլտ-աշխատանքի կազ-
մակերպման խնդրին.

Այն արհմիությունների կենտրարչություններն
ու գավարոֆրյուրները, վորոնք իրենց կազմում ու-
նեն սեղոնային բանվորներ, պետք և գործադրեն բո-
լոր հնարավոր միջոցները, վորպեսզի կարելի լինի
լրիվ կերպով կերպուել կյանքում Հ. Ա. Մ. Կ. Խ.
№ 10-ի գիրեկտիվային նամակի ցուցմունքները՝ կուլտ
կրթական աշխատանքի բնագավառում և պետք և ա-
պահովել այս աշխատանքը նյութական միջոցներով
այն հաշվով, վոր կուլտ-կրթական նպատակների հա-
մար ծախսվող գումարները յերբեք պակաս չլինեն այն
գումարներից, վորոնք մուծվում են գործատու ձեռ-
նարկների կողմից այդ նույն նպատակի համար:

Այն սեղոնային բանվորների համար, վորոնք աշ-
խատում են կուլտուրական կենտրոններից հեռու ըն-
կած վայրերում, Վրաստանի պրոֆիորհուրդը պիտի
շատ կարգով ծրագիր մշակի նրանց մեջ տարպելիք
կուլտ-աշխատանքի համար, լայն կերպով ոգտագոր-
ծելով այս նպատակի համար տեղական քաղաքավա-
րական որգանները:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ և 10 ԴԻ-
ՐԵԿՑԻՎԱՅԻՆ ՆԱՄԱԿԸ.

Հանրապետական, շրջանային և նահանգական
բոլոր պրոֆխորհուրդներին, սեղոնային բանվորների
ընդունող և ինդուստրիալ արհմիությունների բոլոր
կենտրոններին:

Հարգելի ընկերներ,

Շինարարական հիմնական աշխատանքը, տորֆի
մշակումը, փայտեղենի մթերուսն ու նրա տեղափո-
խությունը զետերով, ինչպես և ձկան արդյունաբե-
րությունն ու նման այլ աշխատանքներ տարվում են
բացառապես սեղոնային բանվորների միջոցով։ Այդ
բոլոր աշխատանքների վրա ծախսվում են հսկայական
գումարներ. հանրային սեկտորի ուղիով տարվելիք
հիմնական կառուցումների վրա, մասնավորապես այս
սեղոնում ծախսվելու յէ 5.500 միլիոն ռուբլի։ Պե-
տության կողմից ծախսվելիք գումարների ռացիոնալ
ոգտագործումը և անհրաժեշտ արդյունքը ստանալու
յերբույթը խոշոր չափով կախված կլինի այն հանգո-
մանքից թէ ի՞նչ աստիճան գիտակից վերաբերմունք
ցույց կտան հենց իրենք, սեղոնային բանվորները
տվյալ արդյունաբերության։ Այդ տեսակետից պարտք
և ընկնում արհեստակցական միությունների վրա
դասակարգայնորեն կրթել սեղոնային բանվորներին,

բարձրացնել նրանց կուտուրական մակարդակը և
ամրացնել նրանց կապը պրոլետարիատի հիմնական
կաղրի հետ։ Արհեստակցական միությունները իրենց
առողյա աշխատանքի ընթացքում սեղոնային բան-
վորներին պիտի դաստիարակեն դասակարգային—
պրոլետարական վոգով զարգացնելով նրանց մեջ գի-
տակից վերաբերմունքի անհրաժեշտությունը դեպի
այն աշխատանքը, վոր նրանք կատարում են, զու-
գընթաց կերպով արհմիությունները պարտավոր են
պարզաբանել նրանց այն հերթական խնդիրներն ու
դժվարությունները, վորոնք առաջ են գալիս սոցիա-
լիստական շինարարության ասպարեզում։

Այն ժամանակ, յերբ սեղոնային բանվորները
աշխատում են արգյունաբերության մեջ, արհեստակ-
ցական միությունները պարտավոր են գաղափար տալ
նրանց այն նախաձեռնությունների ու քաղաքակա-
նության մասին, վոր վարում են խորհրդային իշխա-
նությունն ու կոմկուսակցությունը գյուղական տըն-
տեսության վերակառուցման բնագավառում։ Այս բա-
ցարական աշխատանքը պիտի տանել այն հաշվով,
վոր հետեանքում սեղոնային բանվորները ապագա-
յում իրենք հանդի գան գյուղում իրեկ այդ քաղա-
քականություն կրողներ զարկ տան գյուղական տըն-
տեսության կողեկտիվացման և կարողանան, հարկ
յեղած դեպում, հականարձակ լինել կուլակին, վորը
խոչնդու և հանդիսանում գյուղական տնտեսության
սոցիալիստական վերակառուցման։

Նշելով այն հանգամանքը, վոր անցյալ տարի-
ներում սեղոնային բանվորների մեջ այս աշխատան-
քը տարվել ե բավական թերի, չ. Ա. Մ. Կ. Խորհրդի

պրեզիդիումը առաջարկում է համապատասխան արհմիությունների կենտրոններին ուժեղացնել այդ աշխատանքը ընթանցիկ սեղոնում, ղեկավարվելով հետևյալ ցուցմունքներով՝

I Կազմակերպչական բնագավառում

1. Սեղոնային աշխատանքների նախորեյին արհմիութենական կազմակերպությունները պարտավոր են հոգալ տեղեկատու կետեր կազմակերպելու մասին. այդ տեղեկատու կետերի կարեորությունը մեծ ե մասնավանդ նախական շրջանում։ Հենց այդ նպատակով, այն կետերում, ուր կուտակվում են մեծ թվով սեղոնային բանվորներ (խաչաձևվող յերկաթուղարյին կայարաններում, աշխատանքի բարսաներում, հանրակացարաններում և այլն) պիտի ստեղծվեն տեղեկատու սեղաններ։ Միջմիութենական որգանները պարտավոր են այս խնդրում լայն աշխացություն ցույց տալ սեղոնային բանվորներ ընդգրրկող արհմիություններին։ Մասնավորապես պրոֆխորհուրդները պարտավորվում են հետեւ, վոր յերկաթուղարյինների միության տեղական որգանները այս կետերը կազսակերպած ունենան սեղոնային բանվորների յերկաթուղային կայարաններում կուտակվելու պահին։

2. Սեղոնային բանվորների մեջ միութենական աշխատանքի ծավալումը կախում ունի միութենական ստորին որգանների ցանցի ժամանակին կազմակերպելուց։ Դրա համար անհրաժեշտ ե միութենական ստորին որգանների գործից չազատված ընկերներին կցել հանձննժողովովներին, տալ նրանց այս կամ այն հանձնարարությունը, առաջարկել նրանց զեկուցումներ կարդալ այս կամ այն խնդրի շուրջը և այլն։

աշխատանքը տանելու համար) առանձին ուշադրություն դարձնելով միութենական որգանների անձնակազմի ընտրության վրա։ Ըստրական որգաններում անցկացնելու համար թեկնածուներ նշելիս պետք է, առաջին հերթին հաշվի առնել այն ակտիվիստներին, վորոնք անցյալ սեղոններում աչքի յեն ընկել իրենց աշխատանքով թե արհմիութենական գծով և թե այլ հառարակական աշխատանքներում, աչքաթող չանելով նաև նրանց աշխատանքը իրենց բնակավայրում՝ գյուղում, ձմեռվա շրջանում։ Յեթե սեղոնային բանվորները հավաքվեն միութենական որգանների վերընտրությունների շրջանում, ապա պետք աշխատել միութենական որգաններում նրանց տալ համապատասխան քանակությամբ տեղ։ Միութենական որգանները (բանկում, խմբկոմ) կազմակերպելու հետ զուգընթաց պիտի ընտրվեն նաև զելեգատներ, անդամակցական վճարներ գանձողներ, զանազան հանձնաժողովներ և այլն։

3. Միութենական ստորին որգանների աշխատանքը դրվելու յե այնպես, վոր ընտրվածների ամերող կազմը մասնակցի այդ աշխատանքին։ Դրա համար անհրաժեշտ ե միութենական ստորին որգանների գործից չազատված ընկերներին կցել հանձննժողովներին, տալ նրանց այս կամ այն հանձնարարությունը, առաջարկել նրանց զեկուցումներ կարդալ այս կամ այն խնդրի շուրջը և այլն։

Միութենական զեկավար որգաններին անհրաժեշտ ե, մշտական կենդանի կապի, ցուցմունքների և ուղարկված դիրեկտիվների կենսագործման փաստերի քննության միջոցով ուժեղացնել ղեկավարությունը

ստորին որդանների նկատմամբ: Նահանգական պրոֆ-
միությունների և Միությունների կենտրոնների պա-
տասխանատու աշխատավորները տեղերի աշխա-
տանքին ոժանդակելու նպատակով սեզոնային բան-
որների աշխատավայրերը պիտի այցելեն հաճախ և
ավելի յերկար ժամանակով:

4. Միությունների շարքերը վոչ պրոլետարական
տարրերից ապահովելու համար ՀԱՄԿԽ հանել և մի
փորձում, վորը խիստ պայմաններ և առաջադրում
սեզոնային բանվորներին միությունների մեջ ընդու-
նելու ինդրում: Առաջարկվում ե այն միություննե-
րին, վորոնք սպասարկում են սեզոնային բանվորնե-
րին, խստիվ կերպով զեկավարվել այս դիրեկտիվնե-
րով: Միաժամանակ առաջարկվում ե ամենառոշադիր
վերաբերմունքը ցուցադրել և միութենական կազմա-
կերպությունների մեջ ներքրավել բոլոր այն սեզո-
նային բանվորներին, վորոնց գոյության հիսնական
ակունքը հանդիսանում ե վարձու աշխատանքը:

Սա վերաբերում ե, մանավանդ, հողանտառ
միության:

5. Սեզոնային բանվորների մեջ տարվելիք միու-
թենական աշխատանքում կենտրոնական տեղ գրավե-
լու և մասսայական աշխատանքը: Այս նպատակի հա-
մար անհրաժեշտ ե կիրառել հնտեյալ նախաձեռնու-
թյունները՝

ա) պրոֆորդանները պարտավոր են խնամքով և
ժամանակին պատրաստվել ներկայացուցչական և
ընդհանուր ժողովներ անցկացնելու համար (համա-
պատասխան շենք գտնել ժողովների մասին ժամա-
նակին հայտարարել և այլն);

բ) խելացի կերպով որակարգ մշակել ներկայա-
ցուցչական և ընդհանուր ժողովների համար, որակար-
գի մեջ առնելով այնպիսի խնդիրներ, վորոնք ամենից
ավելի հետաքրքրում են սեզոնային բանվորներին:

գ) կազմել հանրամատչելի զեկուցումներ, խնամ-
քով վորակյալ զեկուցողներ ընտրելով.

դ) նախորդ ժողովների վորոշումների իրագործ-
ման շուրջը միութենական որդանների պարտադիր
հաշվետվական ժողովներ անցկացնել.

Այստեղ առանձնապես հարկավոր ե ընդգծել, վոր
միութենական աշխատանքի աջողությունը ապահոված
կարելի յե համարել միայն բանվորական ինքնաքննա-
գատության լայն ծավալման և արհմիութենական դե-
մոկրատիայի սկզբունքի կիրառման պայմաններում:

6) Սեզոնային բանվորների շարքերում մեծ տո-
կոս են կազմում կին-բանվորութիւնները: Միութենական
կազմակերպություններին անհրաժեշտ ե ծեռնարկել
մի շարք գործնական սիջոցառումների միութենական
աշխատանքի մեջ կանանց ավելի լայն կերպով ներ-
գրավելու համար. անհրաժեշտ ե նաև յերեան բերել
ու հաշվի առնել կանանց յուրահատուկ աշխատանքի
պայմանները ու ամենալավ ծեղավ սպասարկել: Ա-
ռանձնապես կարեռ ե կորուկ կերպով նրանց առաջ
քաշել և տեղ տալ միութենական որդանների կազմի
մեջ, ինչպես անվարձ, նույնպես և վարձու պաշտոն-
ներում, հանձնաժողովներում, իր գելեզատ և այլն,
ի հարկե, ցույց տալով նրանց իրական ոգնություն
իրենց վրա դրված պարտականություններն ի կատար
ածելու գործում:

7. Վորպեսզի իրական դառնա ինդուստրիալ պլուտարխատի ազգեցությունը սեղոնային բանվորության վրա, արհեստակցական միությունները պետք ե միջոցներ ծեռք առնեն ուժեղացնելու ինդուստրիալ բանվորների կապը սեղոնային բանվորների հետ։ Այս հանգամանքը անհրաժեշտ ե և հնարավոր հենց թեկուզ այն տեսակետից, վոր սեղոնային բանվորների աշխատանքը ընթանում ե կամ գործարանային հողաշերտում կամ այդ հողաշերտերին մոտ։

Ինդուստրիալ արհմիությունները մինչև այժմ վոչ մի նշանակություն չելին տալիս սեղոնային բանվորների մեջ տարվող աշխատանքին, թերագնահատում, անգամ, վոչ մի ոժանդակություն չելին ցուցադրում նրանց սպասարկելու խնդրում։ Ինդուստրիալ միությունների կենտրոնական կոմիտեները համապատասխան ձեռնարկներին պիտի տան ցուցմունքներ, պիտի աջակցեն ամեն կերպ սեղոնային բանվորների սպասարկության գործին—լինի դա ընդհանուր ժողով թե ընդհանուր քաղաքական բնույթ կրող վոր և ե կամպանիա անցկացնելու համար շենքեր ընձեռելու ուղղությամբ, թե սեղոնային բանվորներին սպասարկող ֆարբործկոմների պլենումների նիստերին նրանց ներկացուցիչներին հրավիրելու միջոցով։ Այս վերջին մոմենտը հասրավորություն կտա սեղոնային բանվորներին ոգտագործելու ինդուստրիալ միությունների միութենական աշխատանքի փորձը։

II Տարիքային-տեսեսական աշխատանքը


1. Սեղոնային աշխատանքներին բանվորական ույժ մատակարարելու խնդրի կազմակերպումը պա-

հանջում ե արհեստակցական միություններից ավելի ուշադիր վերաբեռնումնը և հսկողության ուժեղացում սեղոնային բանվորներ վարձելու խնդրում։ Արհմիությունները պիտի հետևեն վոր տնտեսական մարմինները աշխատանքի բորսաներից սեղոնային աշխատանքների համար բանվորական ույժ պահանջեն ժամանակին և պիտի ստուգեն, թե բորսաները վորքան կանոնավոր ու ժամանակին են մատակարարում այդ բանվորական ույժը, այդ մատակարարումը կրմւմ ե արդյոք պլանային բնույթ, արդյոք ժամանակին են կանչվում ույոններից սեղոնային բանվորները, չե՞ խախտվում արդյոք հերթապահությունը և, վերջապես, այն, թե վորքան տեղին են ոգտագործվում այդ ույժերը։

Արհմիությունները պիտի կարողանան ծգտել ու ապահովել այն դրությունը, վոր աշխատանքի բորսաների աշխատանքը մանավանդ այն վայրերում, ուր ամենից ավելի գնում ու գալիս, կուտակվում են սեղոնային բանվորները, հարմարեցրած լինի սեղոնային աշխատանքի տվյալ հյուղի պայմաններին, և վոր գլխավորն ե, նրանք պիտի գործ դնեն ամեն միջոց, վորպես զի բորսաների առջե չկուտակվեն մեծ թվով գործազուրկ սեղոննիկներ։

2. Հավաքական պայմանագրերի կնքումը և աշխատանքի հիմնական ծերի գնահատումները պիտի վերջացրած լինեն նախ բան բանվորների վարձելը, այն հաշվով, վոր բանվորը վարձվելիս կարողանա ծանոթանալ նոր աշխատավայրի աշխատանքի պայմանների և աշխատավարձի չափերի հետ։ Այդ պատճեռով հավաքական պայմանագրերի մասսայական մշա-

360 36-68



ԲԻBLIOOTEKA
ИНСТИТУТА
РОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

կումը այստեղ կրելու յե մի քիչ այլ բնույթ, քան
կրում են նա մշտապես գործող ձեռնարկներում: Հավա-
քական պայմանագրերի նախադի նախնական քըն-
նությունները տեղի յեն ունենալու սեղոնային աշ-
խատավորների այն հիմնական կաղըերի հավաքույթ-
ներում, վորոնք մշտապես վարձում են սեղոնային
աշխատանքի և այն վայրերում, ուր նրանք ապրում
և կցված են վոր և ետ տնտեսական որգանի:

Հավաքական պայմանագրերի բացատրական աշ-
խատանքը պիտի կապել ինչպես ընդհանուր քաղաքա-
կան ու տնտեսական խնդիրների, նույնպես և այն
գժվարությունների հետ, վորոնք առաջանում են այդ
խնդիրների իրազործման մեջ, այլ և պիտի կապել
գոյություն ունեցող տնտեսական դրության և տվյալ
արդյունաբերական ճյուղի և ձեռնարկի հետապնդած
կոնկրետ նպատակների հետ: Աշխատավարձի ու աշ-
խատանքի պայմանների վերաբերյալ տարվելիք բա-
ցատրական աշխատանքի հետ զուգընթաց անհրաժեշտ
ե բանվորների ուշադրությունը կենտրոնացնել և այն
պակասությունների վրա, վորոնք բղխում են հավա-
քական պայմանագրերի նախատեսած պայմաններից
ինչպիսին են որ.—աշխատանքային դիսցիպլինայի
պահպանումը, հոգատար վերաբերմունք գեղի ձեռ-
նարկի տնտեսությունն ու կահավորությունը, աշխա-
տանքի արտադրականության բարձրացումը և այլն:
Կոնֆլիկտ ծագած գեղքերում միութենական որգան-
ները պարտավոր են գործ դնել իրենցից կախում ու-
նեցող բոլոր հնարավոր միջոցները շուտափույթ կեր-
պով լուծելու բոլոր վիճելի խնդիրները: Առանձին ու-
շագրություն պիտի դարձնել և գագումներից խուսա-

փելով շտապ լուծում պիտի տալ այն կոնֆլիկտներին,
վորոնք ծագում են վարձու աշխատանքը վերջացնելու
ու հաշիվներ մաքրելու ժամանակաշրջանում:

3. Մինչ բանվորների սեղոնային աշխատանքի
գալը արհմիությունները պարտավոր են համապա-
տասխան որգանների առջև հարց դնել հանրակացա-
րանների մասին: Նրանք պիտի աշխատեն, վոր հա-
մապատասխան տնտեսական որգանները ժամանակին
բաց թողնեն միջոցներ յեղած հանրակացարանները
վերանորոգման յենթարկելու, կահավորելու և նոր
հանրակացարաններ կառուցելու համար: Այս տեղե-
րում, ուր մեծ չափով ոգտագործվում են և կանացի
ույժը պիտի հոգ տանել ստեղծելու նաև մոռըներ աշ-
խատավորուհիների յերեխանների համար:

Միաժամանակ պիտի աշխատել առողջապա-
հության ժողկոմատի որգաններին գործի հրավիրելով
և գեղատուն ու բժշկական առաջին ոգնության կայան-
ներ հիմնելով ստեղծել բանվորների համար նորմալ
առողջապահական պայմաններ: Հարկավոր են հետևել
նաև սոցիալական ապահովագրական որգանների աշ-
խատանքին: Այս վերջինները պարտավոր են ավելի
ու ավելի հարմարեցնել իրենց ապարատը սեղոնային
բանվորների պայմաններին, ավելի պարզ գարձնել ու
ապահովագրական գործառնությունները ավելի մոռե-
ցնել ապահովագրված սեղոնային բանվորների մաս-
սաներին:

4. Արհմիութենական կազմակերպությունները
հարկավոր չափով ուշադրություն պիտի դարձնեն նաև
սեղոնային բանվորների սպառողական կարիքների
բավարարման վրա: Դրա համար անհրաժեշտ ե պա-

հանջել, վոր կոռպերացիան իր վրա առնի սեզոնային բանվորներին ժամանակին և լրիվ կերպով սննդամթերք մատակարարելու խնդիրը, կարգ հաստատի նրանց դեֆիցիտային ապրանք մատակարարելու համար, գոյություն ունեցող արտելային ճաշարանների դիմաց, ուժեղացնի կոռպերատիվային ճաշարաններ բացելու խնդիրը և, վերջապես, աշխատի մանրավաճառ առևտորի ցանցը ավելի մոտեցնել սեզոնային բանվորների աշխատավայրերին (կրպակներ, խանութներ և այլն): Միաժամանակ պիտի աշխատել նաև սեզոնային բանվորներին առնել կոռպերատիվի փայտաբերերի ցանցի մեջ:

5. Արհմիությունները լուրջ ուշագրություն պիտի նվիրեն վոր թե տնտեսական մարմիններն ու թե բանվորները ճիշտ կերպով կիրառեն այն կանոնները, փորոնք հրապարակվում են Աշխատկոմատի կողմից սեզոնային աշխատանքի վայրերում աշխատանքի պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ, մտանավորապես այն խոչոր կառուցումներում, ուր ադմինիստրացիաները պարագոր են տեխնիքական անձնակազմից ստեղծել մի հանձնաժողով, վորը պատասխանատու լինի աշխատանքի նորմաների խիստ պահպանման համար:

Մրան դուզընթաց, անհրաժեշտ ե ուժեղացնել և աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի աշխատանքը, ամրապնդելով նրա կազը աշխատանքի ինսպեկցիայի հետ: Սեղոնային աշխատանքի բոլոր վայրերում բանվորներին պիտք ե սիստեմատիկ կերպով ծանոթացնել այն միջոցների հետ, փորոնք անհրաժեշտ

են աշխատանքի ապահովության համար, լծելով այս աշխատանքին տեխնիքական անձնակազմին:

6. Անթագիկ տարվա շրջանում Խ. Ա. Հ. Միության Աշխատանքումատը, անտառանյութերի մթերման և նրանց գետերով տեղափոխելու ուղղությամբ հրատարակել ե շարք նոր պարտադիր վորոշումներ, վորոնք վերաբերում են ապահովության տեխնիկային, աշխատանքի պաշտպանության սանիտարական, բնակարանային և իրավական նորմաներին: Այս վորոշումները հարմարեցրած են հատկապես անտառանյութերի մթերման և նրանց ջրերով տեղափոխելու աշխատավայրերում գոյություն ունեցող աշխատանքի պայմաններին: Արհմիությունները աշխատանքի տեսչության հետ միատեղ իրենց հիմնական խնդիրը պիտի համարեն աշխատովկոմատի այս վորոշումները լրիվ կերպով կիրառելու կյանքի մեջ:

7. Արտադրական խորհրդակցությունները իբր դպրոցներ բանվորներին արտադրականորեն դաստիարակող, սեղոնային աշխատանքի վայրերում առանձին գեր ու նշանակություն են ստանում:

Սակայն սեղոնային բանվորների մեջ տարած մասսայական եկոնոմաշխատանքի բնորոշ փաստերը վկայում են, վոր միութենական զեկավար կազմակերպությունները մինչեւ այժմ հարկավոր չափի ուշադրություն չեն նվիրել այդ աշխատանքի ծավալման:

Սեղոնային բանվորների մեջ մասսայական եկոնոմաշխատանքին զարկ տալու տեսակետից միութենական կազմակերպությունները, մինչեւ սեզոնի սկիզբը, պիտի մշակեն այն միջոցառումները, վորոնք անհրաժեշտ են զանազան կառուցումներում, խորհրդա-

յին տնտեսություններում, տորթի մշակույթի վայրերում և այլն արտադրական խորհրդակցությունների աշխատանքը ուժեղացնելու և լավացնելու համար։ Այդ միջոցառումները մշակելիս հաշվի պիտի տոնել մի կողմից անցյալ սեզոնի աշխատանքի փորձը, մյուս կողմից պիտի բարեխեղճ կերպով ծանոթանալ այն արտադրական ծրագրի հետ, վորը կիրառելու յետված տնտեսական որդանը ներկա սեզոնում։ Առանձին ուշադրություն պիտի դարձնել արտադրական խորհրդակցությունների և միութենական կազմակերպությունների կողմից քննության յենթարկվող այն խնդրի վրա, վորը, համաձայն կառավարական գիրեկտիվի, թելադրում և 1928—1929 թ. իշեցնել կառուցումների ինքնարժեքը 15% -ով։

III Կուլտուր-կրթական աժխատանի բնագավառում

Թե ինչ կուլտուրական աշխատանք պիտի տանել սեզոնային բանվորների շրջանում այդ առթիվ չ. Ա. Մ. կ. Խորհուրդը արգեն տվել և վորոշ ցուցմունքեր։

Անհրաժեշտ է միայն նշել, վոր այդ ցուցմունքները պլոտիկալմակերպությունների կողմից հարկավոր չափով հաշվի չեն առնվել կուլտուրական աշխատանքը յեղել և վոչ միայն թույլ այլ և նա ամբողջապես չի համապատասխանել մեր քաղաքական խնդիրներին և սեզոնային բանվորների պահանջներին։

Սեզոնային բանվորների մեջ կուլտուրական աշխատանք կազմակերպելիս անհրաժեշտ է ուշադրությունը կենարունացնել ամենից առաջ հետեւյալ մոմենտների վրա։

1. Զանալով ամեն կերպ հարմարեցնել սեզոնային բանվորների մեջ տարվելիք կուլտուրական աշխատանքին միութենական ակումբները, այգիները, մրցագալարերը (стадион) և այլն, անհրաժեշտ են նաև ստեղծել հարկավոր բանակությամբ կարմիր անկյուններ բոլոր այն տեղերում, ուր նրանք խմբված են՝ աշխատավայրերում, հանրակացարաններում, նրանց վարձված կետերում, մատակարարելով այդ անկյուններին կուլտաշխատանքի համար պահաջակող պարատաներ ինչպիսին են՝ գրականություն, ուղիղուցունարան և այլն։

Բանվորների ցաք ու ցրիվ խմբերին (ճանապարհների վերանորոգության մեջ անտառանյութերի ջրերով տեղափոխելու ղեպերում) սպասարկելու համար հարկավոր են կաղմակերպել շարժական կուլտրագաներ, կարմիր սայլակներ, նավակներ, շարժական կինոներ և այլն։

Հատուկ ուշադրություն պիտի դարձնել սեզոնային բանվորներին միութենական և, ընդհանրապես, պարբերական թերթերին բաժանորդագրելու խնդրի վրա, այն թերթերին, վորոնք թե ժողովրդականացած են և թե իրենց ձեռվ մատչելի յեն սեզոնային բանվորների մեջ տարվելիք կուլտաշխատանքին։

Միջմիութենական որգանների տեսողությունից յերբեք չպիտի վրիպի և համապատասխան կուլտաշխատանք պիտի տարվի սեզոնային այն բանվորների մեջ, վորոնք գտնվում ու աշխատում են քաղաքից գուրս, կուլտուրական կենարուններից հեռու (բատրակությունը, խորհրդային տնտեսությունների բանվորներ, կառուցումները քաղաքից գուրս և այլն) ցույց

տալով նրանց կուլտաշխատանքին ամեն տեսակի ոժանդակություն:

Բոլոր պրոֆեսորադակերպություններն անխտիր պարտավոր են ոժանդակել սեղոնային բանվորների մեջ տարվելիք կուլտաշխատանքին, նրանց կուլտաշխատանքի համար տրամադրելով իրենց ակումբները, այզիները, հրապարակները, նրանց պիտի տալ արտոնություններ, միութինական կուլտհմնարկներում տեղի ունեցող ներկայացումները, կինո-սեանսներն և դասախոսություններն և այլն հաճախելիս:

2. Սեղոնային բանվորների մեջ տարվելիք կուլտաշխատանքի բովանդակության մեջ առաջվա պես ելի առաջին տեղն են բունում հետեւյալ ինդիրները—անդրագիտության վերացումը, նրանց կուլտուրական մակարդակի բարձրացումը, պայքարը արբեցողության, կրոնական աշխարհահայեցսղության հակահրեական տրամադրությունների դեմ և այլն: Արագուգընթաց արհմիությունները պիտի պարզաբանեն սեղոնային բանվորների լայն մասսաների առջև այն ընդհանուր գիծը, վորով ընթանում են թե կուսակցությունն ու թե Խորհրդային իշխանությունը յերկիրը ինդուստրացման և գյուղը սոցիալիստական վերակառուցման յենթարկելու բնագավառում: Առանձնապես կարեւոր է լայն կերպով պարզաբանել արդյունաբերության ռացիոնալացման, աշխատանքի արտադրականության բարձրացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման, մասնավորապես կառուցումների եժանացման ինդիրները շաղկապելով սրանց աշխատանքը այն ճյուղի հետ, վորի մեջ աշխատում են բանվորների տվյալ խումբը:

Իր մեկը այս միջոցներից, վորոնք կարող են հասցնել այս նպատակին, առաջարկվում ե կազմակերպել ինդուստրիալ և սեղոնային բանվորների ընկերական հանդիպումներ ու յերեկոներ, վրանց ընթացքում և պարզաբանել վերոհիշյալ խնդիրները:

3. Վարպեսզի սեղոնային բանվորները իսկապես կարողանան հանդիսանալ խորհրդային շինարարության նախաձեռնողները գյուղում դրա համար հարկավոր ե տալ նրանց տարրական գործնական գիտելիքներ այդ բնագավառից, կազմակերպելով կոնսուլտացիոն-տեղեկատու աշխատանքներ գյուղատնտեսության, գյուղում տարվելիք խորհրդային շինարարության, կոռպերատիվային և կոլտնտեսության շինարարության վերաբերյալ, այս բոլորը կարելի յե տալ զրույցների, գասախոսությունների, ձեռք բերված գրականության և գեղի փորձնական գյուղատնտեսական կայաններն և խորհրդային ու կոլեկտիվ տնտեսություններն և այլն եքսկուրսիաներ կազմակերպելու միջոցով:

Հենց այս նպատակով ել առաջարկվում ե կազմակերպել համերկրացի սեղոնային բանվորների կոնֆերենցիա-խորհրդակցություններ: Այս նույն կոնֆերենցիա-խորհրդակցություններում շատ ցանկալի յե, վոր հանդես գան ինդուստրիալ բանվորների գելեդացիաները, վորպիսի յերեւութը առիթ կտա թե սերտ կապ հաստատելու և թե հնարավորություն կտա այդ յերկուսին փորձերի փոխանակություն կատարել: Այս-տեղ, վորտեղ գյուղություն ունեն գյուղի շեֆության ընկերություններ համերկրացիների կոնֆերենցիա

խորհրդակցությունները այնտեղ անհրաժեշտ ե անց-
կացնել այդ ընկերությունների հետ միատեղ:

4. Համաձայն արհմիությունների VIII համագու-
մարի վորոշման սեղոնային բանվորներին ընդգրկող
միությունների ինչպես և միջմիութենական որգաննե-
րի հերթական խնդիրներից մեկն և համարվում նա-
խապատրաստական աշխատանք տանել կուլտուրիթա-
կան ուղղությամբ, նրանց բնակչության վայրերում
վոչ սեղոնային ժամանակաշրջանում։ Անհրաժեշտ է
առաջին հերթին հոգ տանել այն ուղղությամբ, վոր
ի կատար ածվի V III համագումարի այն վորոշումը,
վորի համաձայն համապատասխան արհմիություն-
ների կենտրոններին կից պիտի ստեղծվի հատուկ
ֆոնդ գյուղում կուլտաշխատանք տանելու համար այն
կազմակերպությունների կուլտմիջոցներից, վորոնք
ընդգրկում են սեղոնային բանվորների, նրանց աշխա-
տանքի ժամանակաշրջանում այն հաշվով վոր կարելի
լինի ընդլայնել կուլտաշխատանքը սեղոնային բան-
վորների մեջ հետագա ձմերային սեղոնում։ Միաժա-
մանակ անհրաժեշտ ե սեղոնային բանվորների և քաղ-
լուսվարական որգանների հետ միասին քննության
յենթարկել վոչ սեղոնային ժամանակաշրջանում տար-
կելիք կուլտաշխատանքի ձևերն ու բովանդակությունը,
